ղըն Սպանդարի որդի մահտեսի Ցարութիւնն ետ, որ մասնակից եղև, թվին ՌՄԼԵ։ (1786)»

«Շինեցաւ վերնատունս 'ի ժամանակս Մուստաֆայ-խանին, ձեռամբ Օհան առաջնորդի Շամախւոյ և յիշատակ Ցարութիւնի եղբօրն Խաչատուրին և ծնողաց Ղարաբաղեցի Ղազարին և Թամարին, թվին ՌՄԿԶ. (1817)»։

«'Ի թվին ՌՄԿԵ (1816) և հայրապետութեան Հայոց Տեառն Եփրեմի և յաւուրս դատաւորութեան Մուստաֆայ-Խանին շնորհիւ ամենազօրին Աստուծոյ, որ միշտ հեղու զշնորհս 'ի վերայ արարածոցս, առեալ զբարի յիշատակս շինողաց, ուստի և եսյուսացեալ 'ի Տէր, ետու շինել զհնձան 'ի յարևելեան կողմն տաճարիս և թողլով յապագայս վկայելոցեն 'ի նոցա որք ունին զաշխատանս և որք ունին ըզտուրս 'ի վերայ սորա, զվարձս 'ի Տեառնէ ընկալցին, որ իմ վառեալ 'ի սիրոյն սրբոյն Ստեփաննոսի և ծառայ նորա Օհան եպիսկոպոս շինող շինուածոյս, Օհան խոնարհ եպիսկոպոս Շամախւոյ քաղաքի 'ի քաղաքագիւղիցն Կիւլիստանու [1]։

«Սրբոյ վանիցս ընական տափերն այս է»։

«Նախ նահատակին երկու տափն, Տէր Նիկողոսի երկու տափն, որք են Ղարօղլանայ տափի գլուխն, Ղուպատի աղբիւրի գլուխն, Խանտատի տափն»։

«Ստացեալն 'ի ձեռն Սահակ եպիսկոպոսի առաջնորդի սորին»։

---

[1]) Այս արձանագրի ուղղութիւնը տես յերես...